

ք. Երևան

2016թ.

Երևան համայնքը ի դեմս քաղաքապետ Տարոն Մարգարյանի, որի անունից Երևանի քաղաքապետի 22.03.2016թ. հ.929-Ա որոշման հիման վրա հանդես է գալիս Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Անյանը, այսուհետ «Փոխատու» մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը /Կենսաբուսական կառավարման գործակալություն/ մյուս կողմից, այսուհետ «Փոխառու», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի մարտի 18-ի հ.502-Ա որոշումը.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով՝ Փոխատուն պարտավորվում է Փոխառուի անհատույց օգտագործմանը հանձնել Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի 498.7քմ և 5-րդ հարկի 74.8քմ մակերեսներով տարածքները, այսուհետ «Գույք»:

1.2. Սույն պայմանագիրը կնքվում է երեք տարի ժամկետով:

1.3. Գույքը ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.11.2011թ. հ.2817291 վկայականի հիման վրա սեփականության իրավունքով պատկանում է Փոխատուին:

1.4. Սույն պայմանագիրը կնքելու պահին Գույքը կալանքի, արգելանքի տակ չի գտնվում համաձայն ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Երևանի տարածքային ստորաբաժանման կողմից 22 Տարբեր 2016թ. տրված հ. 1103201601010 տեղեկանքի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փոխատուն իրավունք ունի՝

- 2.1.1. Փոխառուից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.
- 2.1.2. Փոխառուից պահանջել կատարել Գույքի ընթացիկ և հիմնական վերանորոգումը.
- 2.1.3. Եթե Փոխատուն Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակության անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցել վնասները.

2.2. Փոխատուն պարտավոր է՝

- 2.2.1. Գույքը Փոխառուին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.
- 2.2.2. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Փոխառուին գրավոր տեղեկացնել Գույքն ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված շենքը հիմնական վերանորոգման կանգնեցնելու կամ քաղաքաշինական նկատառումներով այն քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ.

2.3. Փոխառուն իրավունք ունի՝

- 2.3.1. պահանջել Փոխատուից՝ իրեն տրամադրել Գույքը՝ դրա բոլոր պատկանելիքներով և փաստաթղթերով.
- 2.3.2 Գույքը երրորդ անձի օգտագործմանը հանձնել միայն Փոխատուի համաձայնությամբ.

2.4. Փոխառուն պարտավոր է՝

2.4.1. Գույքն օգտագործել պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան.

2.4.2. սույն պայմանագրից ծագող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով և ժամկետներում գրանցել պետական լիազորված մարմնում: Նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացնել իր միջոցների հաշվին.

2.4.3. ժամանակին կատարել Գույքի ընթացիկ վերանորոգումը.

2.4.4. ապահովել Գույքի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը.

2.4.5. առանց Փոխատուի գրավոր համաձայնության՝ Գույքում չկատարել փակ և բաց լարանցումներ և չանցկացնել հաղորդակցության ուղիներ, չանել վերանախագծումներ և վերասարքավորումներ:

Փոխառուի կողմից Գույքի նախնական տեսքը խեղաթյուրող ինքնակամ վերակառուցումներ, պատերի, միջնապատերի կամ ծածկերի ամբողջականության խախտում, ցանցերի վերափոխում կամ անցկացում հայտնաբերելու դեպքում դրանք պետք է վերացվեն, իսկ տարածքը բերվի իր նախկին տեսքին՝ Փոխառուի հաշվին և Փոխատուի որոշած ժամկետում.

2.4.6. Գույքի տարածքներում պահպանել սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային կայանների, պետհրշեջվերահսկողության մարմինների պահանջները, ինչպես նաև բոլոր այն կանոնները և նորմերը, որոնք գործում են Փոխառուի գործունեության ձևերի ու Գույքի նկատմամբ.

2.4.7. Փոխառուի որոշած ժամկետներում ազատել տարածքները՝ կապված Գույքի (կամ դրա մի մասի) կառուցվածքների (կոնստրուկցիաների) վթարային վիճակի, Գույքը հիմնական վերանորոգման ենթարկելու կամ քաղաքաշինության նկատառումներով այն քանդելու հետ.

2.4.8. Գույքը և դրան հարող տարածքը պահպանել պատշաճ սանիտարական վիճակում, ինչպես նաև մշտապես պատշաճ վիճակում պահպանել Գույքի ճակատային մասերը.

2.4.9. Փոխառուին անմիջապես տեղեկացնել Գույքի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Գույքին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար, ինչպես նաև Գույքը հետագայում քանդելու կամ վնասելու դեմ.

2.4.10. սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 10 (տասը) օրվա ընթացքում այլ կազմակերպությունների հետ կնքել պայմանագրեր՝ Գույքի կոմունալ սպասարկումների նպատակով, էներգետիկ կամ այլ միջոցներով ապահովելու վերաբերյալ.

2.4.11. առանց Փոխատուի գրավոր համաձայնության կանոնադրական կապիտալի մեջ չներդնել անհատույց օգտագործման իրավունք:

2.4.12. ապահովել Փոխատուի և նրա ներկայացուցիչների անարգել մուտքն Գույք՝ դրա զննման և ստուգման համար.

2.4.13. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Փոխատուին գրավոր ներկայացնել Գույքի սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարեցնելու հետ.

2.4.14. Գույքն ազատելիս այն սարքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.


2.4.15. սահմանված ժամկետում կատարել Փոխատուի կարգադրությունները՝ ուղղված իր գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վտանգի տակ են դնում Գույքը, իսկ Գույքից դուրս՝ բնապահպանական և սանիտարական իրավիճակը:







700000 N



10